ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 30.05.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2019/39

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝ «Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի ներկայացուցիչներ՝

Ա. Ֆերոյանի (լիազորագիր, տրված՝ 03.05.2019թ.)

Ա. Թամազյանի (լիազորագիր, տրված՝ 03.05.2019թ.)

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 29.04.2019թ. թիվ 26/26-1/7042-2019 գրությամբ «Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ կրթության և գիտության նախարարության 22.04.2019թ. թիվ 04/6465-19 գրության հիման վրա, 29.04.2019թ. թիվ 26/26-1/7042-2019 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական

համալսարան» հիմնադրամին (հետայսու նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 03.05.2019թ. թիվ 22/08.1.6-444 գրությամբ հայտնել է, որ սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման ծրագիրը հանդիսանում է ՀՀ կրթության և գիտության նախարարության (հետայսու նաև՝ Պատվիրատու) կողմից նախաձեռնվող շարունակական ծրագիր: «Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամը (հետայսու նաև՝ Համալսարան) նշված ծրագիրն իրականացնելու նպատակով մասնակցության հայտեր է ներկայացրել 2017թ. և 2018փ. Պատվիրատուի կողմից հայտարարված դրամաշնորհի հատկացման մրցույթներին և նշված երկու մրցույթներում էլ, հանդիսանալով միակ մասնակից, ճանաչվել հաղթող և կնքված պայմանագրերի հիման վրա պատշաճ մակարդակով իրականացրել է այդ ծրագրերը, ընդ որում երկու դեպքում էլ չակնկալելով ստանալ որևէ շահույթ (համաձայն նախահաշիվների և փաստացի կատարված աշխատանքների բացառապես փոխհատուցվել են միայն Համալսարանի կողմից կատարված ծախսերը): 09.04.2019թ. ևս Համալսարանը մանսակցության հայտ է ներկայացրել ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից հայտարարված դրամաշնորհի հատկացման մրցույթին, որի բացման նիստը հրահրվել է 11.04.2019թ., կրկին հանդիսանալով միակ մասնակիցը: Սակայն հանգամանքների չնախատեսված զուգադիպությամբ, Համալսարանում 2018թ. ֆինանսնատնտեսական գործունեության մասով իրականացվող աուդիտի ընթացակարգով պայմանավորված (աուդիտորներին ներկայացնելու նպատակով անհրաժեշտություն էր առաջացել կատարելու ճշտումներ նախորդ տարվա եկամտային հարկի հաշվարկում) 08.04.2019թ. ներկայացված ճշտված հաշվարկով ծագել էր 7 մլն. ՀՀ դրամի հավելյալ հարկային պարտավորություն (հաշվի

առնելով նաև Համալսարանի միասնական հաշվում առկա գերավճարը, հարկային պարտավորության վերջնական մնացորդը կազմել էր 5 611 հազ. դրամ): Համալսարանի հաշվապահությունը նշված պարտավորությունն ամբողջությամբ մարել է, ինչպես նաև եկամտային հարկի գծով փոխանցել է հավելյալ 20 000 հազ. ՀՀ դրամի չափով կանխավճար 10.04.2019թ. և այդ օրվա դրությամբ միասնական հաշվին արդեն իսկ ունեցել է 21 381 հազ. ՀՀ դրամի չափով գերավճար:

Համալսարանի ունեցած տեղեկություններով մրցույթների մասնակցության հայտը ներկայացնելու օրվա դրությամբ սահմանաչափը գերազանցող ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության հիմքով մրցույթի մասնակցին գնումների գործընթացին մանսակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նախաձեռնված ընթացակարգերի մասով կան նաև դատական նախադեպեր:

Համալսարանը, հաշվի առնելով վերը նշված բոլոր հանգամանքները և այն, որ վերջինս մրցույթի միակ մասնակիցն է և բնավ որևէ միտում չի ունեցել թույլ տալու գնման ընթացակարգի որևէ խախտում, ինչպես նաև կարևորելով ՀՀ կրթության և գիտության նախարարության և Համալսարանի կողմից համատեղ իրականացվող «Սփյուռքի հայկական դպրոցների ուսուցիչների վերապատրաստման» ամենամյա ծրագրի դերն ու նշանակությունը սթյուռքում հայեցի կրթության պահպանման ու զարգացման շնորհակալ գործում, Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է Համալսարանին չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

«Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/39 ընթացակարգի շրջանակներում 06.05.2019թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. <u>ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ կրթության և գիտության նախարարությունը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 22.04.2019թ. թիվ 04/6465-19 գրությամբ հայտնել է, որ ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից 2019 թվականի ապրիլի 11-ին գնանշման հարցման ընթացակարգով «ՀՀԿԳՆԳՀԾՁԲ-19/5» ծածկագրով կազմակերպված սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման ծառայությունների գնման գործընթացի արդյունքում «Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամը գնահատող հանձնաժողովի կողմից հայտարարվել է 1-ին տեղ զբաղեցնող և գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հարցում է ներկայացվել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե վերջինիս «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով: ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ստացվել է համապատասխան եզրակացությունը, համաձայն որի «Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/39 ընթացակարգի շրջանակներում 06.05.2019թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2019/39 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2019/39 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից ՀՀ կրթության և գիտության նախարարության կարիքների համար կազմակերպվել է «ՀՀԿԳՆԳՀԾՁԲ-19/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով 09.04.2019թ. հայտ է ներկայացրել «Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամը:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.04.2019թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամը ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

3. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 17.04.2019թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի 5 614 871 ՀՀ դրամի չափով ժամկետանց պարտավորություն:***

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.04.2019թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 5 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի հայտը մերժվել է:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 29.04.2019թ. թիվ 26/26-1/7042-2019 գրությունը, ՀՀ կրթության և գիտության նախարարության 22.04.2019թ. թիվ 04/6465-19 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 6-րդ կետերի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ

կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝

2) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ

6) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված

տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից ՀՀ կրթության և գիտության նախարարության կարիքների համար կազմակերպվել է «ՀՀԿԳՆԳՀԾՁԲ-19/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով 09.04.2019թ. հայտ է ներկայացրել «Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամը:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 17.04.2019թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի 5 614 871 ՀՀ դրամի չափով ժամկետանց պարտավորություն:***

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.04.2019թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 5 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի հայտը մերժվել է, այն հիմնավորմամբ, որ Մասնակիցն ունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություն:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետը սահմանում է, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Այսպիսով՝ Մասնակիցը Ընթացակարգի մասնակցության հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է Ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին, մինչդեռ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված եզրակացության համաձայն՝ Մասնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորության չափը գերազանցել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ մասով նախատեսված շեմը:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից ուսումնասիրվել են նաև «Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի կողմից ներկայացված N 571 և N 572 վճարման հանձնարարականները, համաձայն որոնց Մասնակցի կողմից հարկերի միասնական «900008000490» հաշվեհամարին 10.04.2019թ. իրականացվել են համապատասխանաբար 20 մլն. և 7 մլն. ՀՀ դրամ գումարի վճարումներ: Այս տեսանկյունից արձանագրում եմ, որ «Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի կողմից Ընթացակարգի մասնակցության հայտը ներկայացվել է 09.04.2019թ., իսկ վերոհիշյալ վճարումներն իրականացվել են 10.04.2019թ., մինչդեռ Օրենքը սահմանում է, որ Մասնակցի՝ հարկային

մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության հարցը դիտարկվում է հայտը ներկայացնելու օրվա դրությամբ:

Այսպիսով հաշվի առնելով վերոգրյալը՝ արձանագրում եմ, որ Մասնակիցը «ՀՀԿԳՆԳՀԾՁԲ-19/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորության խախտում, ուստի գտնում եմ, որ առկա են Մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 29.04.2019թ. թիվ 26/26-1/7042-2019 գրությամբ «Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**